# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար աշխարհագրության լաբորատորիայի սարքավորումների և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25-26/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի հոկտեմբերի 9-ին կնքված N ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25-26/1-1 ծածկագրով պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2026 թվականի ապրիլի 8-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** Պայմանագրի առավել արդյունավետ կատարումն ապահովելու նպատակով Պայմանագրով նախատեսված որոշ մատակարարման հասցեների փոփոխության անհրաժեշտություն:

**Փոփոխության նկարագրություն՝** Պայմանագրի շրջանակում կատարված փոփոխությունների արդյունքում.

1. Հավելված N 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի Հավելված 1.2-ի և 2026 թվականի փետրվարի 19-ին կնքված Համաձայնագիր 6-ի Հավելված N 1-ի 2026 թվականի «ՑԱՆԿ՝ մատակարարման հասցեների» աղյուսակի «Հիմնական դպրոցների 20-աշակերտ խտությամբ» բաժնի «1» տողը ու «Միջնակարգ դպրոցներ 20-աշակերտ խտությամբ» բաժնի «35» և «36» տողերը փոփոխվել և հաստատվել է համաձայն Համաձայնագրի 7-ի Հավելված 1-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** Պայմանագրի առավել արդյունավետ իրականացման ապահովում՝ ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 3)-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն, որոնց արդյունքում տեղի է ունեցել փոփոխություն Պայմանագրում, պահպանելով պայմանագրի 8.5 կետով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ**